

## Հաշվետվություն

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության կողմից 2024թվականի առաջին եռամսյակում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատակազմի փաստաթղթաշրջանառության բաժնում իրականացվել է ընդամենը 9953 փաստաթղթաշրջանառություն, որից՝ 3189 մտից, 2255 ելից, 4509 ներքին:

**2024թ-ի առաջին եռամսյակում ստացվել է 321 դիմում:**

**ա/** Դրամական օգնություն է խնդրել 162 քաղաքացի: 158 քաղաքացու խնդրանք բավարարվել է, 4-ինը՝ մերժվել է:

**բ/** Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 4 քաղաքացի, բոլոր 4 դիմումներին պատասխանվել է:

**գ/** Առողջապահական բնույթի 8 դիմում է ստացվել, ստացված 8 դիմումներն էլ բավարարվել են:

**դ/** Աշխատանքի հարցերով դիմել է 24 քաղաքացի, ստացված բոլոր դիմումներին տրվել է դրական ընթացք:

**ե/** Գյուղատնտեսական հարցերով դիմել է 5 քաղաքացի, 5-ին տրվել է դրական պատասխան:

**զ/** Կրթության և նախադպրոցական ուսումնական հաստատություններին առնչվող հարցերով դիմել է 3 քաղաքացի և ստացել են դրական պատասխան:

**է/** Հողաշինության հարցերով դիմումներ չեն ներկայացվել:

**ը/** Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է 10 քաղաքացի և ստացել դրական պատասխան:

**թ/** Ստացվել է այլ բնույթի 105 դիմում: